




ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ

Ժ ը ն կ

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Ինչպես հայտնի է Ձեզ, առաջին համաշխարհային պատերազմին, 1915 և 1916 տարիների ընթացքում, Օսմանյան Թուրքիայի կառավարությունը ծրագրված ձևով կազմակերպեց ու գործադրեց Արևմտյան Հայաստանի ամբողջ բնակչության բնաջնջումը, որին զոհ գնացին մոտ երկու միլիոն հայեր, ամբողջ հայ մտավորականությունը և բազմահարյուր եպիսկոպոսներ ու քահանաներ:

Ամբողջ մի ժողովուրդ ահավոր պայմաններում կոտորվեց իր իսկ պատմական հայրենիքի հողամասի վրա: Կատարվեց մի ամբողջական ցեղասպանություն:

Բազմաթիվ անգլիացի, ամերիկացի, ֆրանսիացի և գերմանացի հեղինակներ և պաշտոնական պետական հրատարակություններ ճշգրիտ վկայություններ են հրապարակել, սկսած 1916 թվականից մինչև մեր օրերը:

Հայոց ցեղասպանության մասին հիշենք այստեղ միայն մեծ վկայություններից՝ անգլիական կառավարության «Կապուչո Գիրքը», լույս ընծայված 1916-ին, և Լորդ Բրայսի պատմական ճառը, խոսված Բրիտանական Պառլամենտում 6 Հոկտեմբեր 1915-ին, որը հրատարակվել է նույն ցեղասպանության մասին պատմաբան Առնոլդ Թոյնբիի ծանոթ գրքում:

Այդ գրքում Լորդ Բրայսը վկայում է, թե՝ «Պատմության մեջ չկա օրինակ նման մի կոտորածի այն երկրի մեջ, որ տարածվում է Պարսկաստանի սահմաններից մինչև Մարմարա ծով»: Նույն իր ճառում Լորդ Բրայսը եզրակացնում է. «Կան ոճիրներ, որոնք չեն կարող հանդուրժվել աշխարհի վերավորված հանրային կարծիքի կողմից»:

Հիշենք նաև գերմանացի հոգևորական դոկտ. Իոհաննես Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը» հայտնի աշխատությունը (1919 թ.), որը պատմական մի վկայություն է 1915 թվականի հայկական ցեղասպանության մասին:

Կարծում ենք, որ արդարությունը պահանջում է, որ 1915—1916 տարիներին տեղի ունեցած հայոց ցեղասպանությունը միջազգային ճանաչման արժանանա և արձանագրվի իբրև մեր դարի մեծագույն ողբերգություններից մեկը, որով մի լամբողջ ժողովուրդ արմատախիլ արվեց իր պատմական բնակավայրերից և կոտորվեց:

Հայ ժողովուրդը, կարծում ենք, սրբազան իրավունքն ունի սպասելու, որ քաղաքակիրթ աշխարհը, Եվրոպական Պառլամենտի բարձունքից, հաստատի ու հռչակի այդ ցեղասպանության արարքը, հանդիսանալով խղճի ձայնը մեր օրերի մարդկության:

Մեզ հայտնի է, որ Ստրասբուրգում գումարվելիք Եվրոպական Պառլամենտը առաջիկա հունիսի կեսերին իր օրակարգի վրա պիտի ունենա 1915-ի հայկական ցեղասպանության ճանաչում տալու հարցը: Այս առթիվ Մենք մտահոգված ենք, որովհետև ծանոթ է Մեզ, թե կան Պառլամենտի լանդամեն, որոնք պատմական ճշմարտությունը և մարդկային խղճի ձայնը անտեսելով, հանուն քաղաքական ինչ-ինչ շահերի, տրամադրված չեն պաշտպան կանգնելու հայ ազգի արդար դատին:

Այսու Մեր գրով հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, գալիս ենք Ձեր և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ուշադրությանը հանձնելու այս պարագան և խնդրելու, որ հանուն մարդու և ազգությունների իրավանց, Ձեր հեղինակավոր խոսքը լսելի դարձնեք Եվրոպական Պառլամենտի առաջ առաջիկա հունիսին, ի պաշտպանություն 1915-ի հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, հստակորեն ճշտելով, որ 1915—1916 թվականներին կատարվածը, արդար է բանաձևել որպես մի իրական և ամբողջական ցեղասպանություն, և ոչ թե այն մկատել լոկ «անարդարություն», ինչպես քվեարկված էր Եվրոպական Պառլամենտի Քաղաքական Հանձնաժողովի 25 Փետրվար 1987 թ. նիստում (հոդ. թիվ 1):

Այս առթիվ Ձեր բարձր ուշադրությանն ենք հանձնում նաև այն, որ վերոհիշյալ Քաղաքական Հանձնաժողովի 25 Փետրվար նիստում, հայկական ցեղասպանության մասին քվեարկված թիվ 5 երկու հոդվածների բանաձևի մեջ ակնարկ կա՝ մեր օրերի վերածնված ծաղկյալ հայկական Հանրապետության՝ Սովետական Հայաստանի ներքին ընկերային կյանքին, ինչ որ Մենք գտնում ենք անհիմն, և որ միայն կարող է վնաս հասցնել հայ ժողովրդի արդար դատի լուծմանը:

Թող բարին Աստված մնա Ձեզ միշտ օգնական և զորացնի Ձեզ Սուրբ Հոգով Ձեր սրբազան առաքելության ճանապարհին:

Սպասելով Ձեր բարի լուրերին, հաճեցեք ընդունել Մեր եղբայրական սիրո ողջույնը ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

14 Մայիս 1987 թ.